«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի 2025 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1465-Ն և 2016թ. սեպտեմբերի 8-ի թիվ 929-Ն որոշումների համաձայն իրականացրել է աշխատանքներ 79038,8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ որից

- «Շիկահող» մասնաճյուղ «Շիկահող» պետական արգելոց» տեղամաս– 12137,075հա
- «Սոսու պուրակ» պետական արգելավայր» տեղամաս– 64.2հա
- «Խուստուփ» պետական արգելավայր» տեղամաս- 6946.74հա
- «Զանգեզուր» մասնաճյուղ «Զանգեզուր» պետական արգելավայր» տեղամաս- 25711,5959հա
- «Սև Լիճ» պետական արգելավայր» տեղամաս– 240հա
- «Արևիք» մասնաճյուղ «Արևիք» ազգային պարկ» տեղամաս- 31211,19հա
- «Բողաքար» պետական արգելավայր» տեղամաս- 2728հա

1. Բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման միջոցառումների իրականացում

1.1 ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդհանուր միջոցառումների իրականացում (79038.8 հա):

Աշխատանքներն իրականացվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի 2025 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն:

Ինն ամսիների ընթացքում բնության հատուկ պահպանվող տարածքներում իրավախախտման դեպքեր չեն արձանագրվել:

1.2 Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:

ՇՄՆ նախարարի N/16.11/1708 հանձնարարականի հիման վրա հրդեհավտանգ ժամանակահատվածով պայմանավորված, հնարավոր հրդեհների առաջացումը կանխելու նպատակով ձեռնարկվել են գործուն միջոցներ և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գույքը բեվել է պատրաստի վիճակի:

Ինն ամիսների ընթացքում <<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի տարածքում հրդեհներ չեն արձանագրվել:

Ինն ամիսների ընթացքում «<<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի հարակից տարածքում հրդեհներ չեն արձանագրվել:

1.3 Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքների միջոցառումների իրականացմանը:

Ինն ամիսների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների, հարակից համայնքների ղեկավարների և ՊՆ ղեկավարության հետ անց են կացվել քննարկում-զրույցներ՝ 95 անգամ:

1.4. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:

Ընդհանուր միջոցառումների, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացված հանդիպումների շնորհիվ, ապահովում ենք բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության պահպանությունը և բնականոն կայուն զարգացումը:

1.5 Ծառատնկման աշխատանքների իրականացում

Ինն ամիսների ընթացքում «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանում աճեցված տնկիներով մարտի 30-ին ՀՀ ՊՆ N զորամասում իրականացվել է ծառատունկ: Տնկվել են 80 հատ կատալպա, 20 հատ սոսի և 155 հատ բարդի տեսակի ծառեր:

Տնկարանում աճեցվող տնկիներն օգտագործվել են ծառատնկման և անտառվերականգնման աշխատանքներում, մասնավորապես՝

- ՀՀ ՊՆ N զորամասին տրամադրվել է 45 տնկի,
- Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի հարակից տարածքում, տնկվել է 20 ծառ,
- «Արևիք» ազգային պարկի տարածքում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ, որոնց ընթացքում տնկվել է 200 ծառ:
- «Շիկահող» պետական արգելոցին հարակից Ծավ բնակավայրի համայնքային տարածքի կանաչապատման նպատակով կազմակերպվել է ծառատունկ, որին ներգրավվել էին Ծավի միջնակարգ դպրոցի աշակերտները: Տնկվել է 40 ծառ:

2. Գիտական և էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ

2.1 Գիտահետազոտական միջոցառումների իրականացում

ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում,

բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն, վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորասիական ընձառյուծ), ներառյալ բուսական տեսակների հաշվառմանն ուղղված աշխատանքներ,

գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ:

Ինն ամսիների ընթացքում կատարվել են բնության հատուկ պահպանվող տարածքներում հանդիպող, բնադրվող, նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ, որոնց ընթացքում արձանագրվել են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ՝ Սև փայտփոր, Միջերկրածովյան երաշտահավ, Սպիտակագլուխ անգղ, Գառնանգղ: Կիսամյակի ընթացքում գարնանային վերադարձ է արձանագրվել հետևյալ թռչնատեսակների շրջանում՝ Մոխրագույն ճանճորս, Կիսասպիտակավիզ ճանճորս, Փոքր ճանճորս, Մորու շահրիկ, Դալուկ մորեհավ, Կովկասյան գեղգեղիկ, Լայնապոչ եղեգնաթռչնակ, Սովորական քարաթռչնակ, Պարող քարաթռչնակ, Սեվախայտ քարաթռչնակ, Սովորական սոխակ, Հարավային սոխակ, Պիրոլ, Ժուլան, Կարմրակատար շամփրուկ, Դաշտային ծիաթռչնակ, Մարգագետնային ծիաթռչնակ, Անտառային ծիաթռչնակ, Դեղին խաղտտնիկ, Տափաստանային արտույտ, Անտառային արտույտ, Փոքր արտույտ, Ոսկեգույն մեղվակեր, Ներկարար,Եվրոպական բվիկ, Սովորական կկու, Մարգագետնային մկնաճուռակ, Գիշանգղ, Գաճաճ արծիվ, Օձակեր արծիվ, Կրետակեր: Չվող և նստակյաց տեսակներից մեծ մասի մոտ նկատվել են բնականոն բնադրում և ձվադրում:

Ինն ամիսների ընթացքում իրականացվել են շրջայցեր և ստուգայցեր «Շիկահող» և «Արևիք» մասնաճյուղերում, որոնց ընթացքում իրականացվել են խոշոր կաթնասունների որոշ ներկայացուցիչների (Գորշ արջ, Եվրոպական այծյամ, Անտառակատու, Վայրի խոզ, Հնդկական մացառախոզ, Կովկասյան ընձառյուծ, Բեզոարյան այծ, Եվրոպական լուսան, Եղեգնակատու, Փորսուղ, Քարակզաքիս) տեսակային ուսումնասիրություններ, այդ թվում՝ դրանց բնակավայրերի, անտառային և լեռնային արահետների, միգրացիոն հատվածների, թողած հետքերի և ոտնահետքերի ուսումնասիրություններ:

Ուսումնասիրությունների ընթացքում համապատասխան արահետներում և հատվածներում տեղադրվել են ֆոտոբռնիչ սարքավորումներ՝ մասնավորապես «Շիկահող» և «Արևիք» մասնաճյուղերում կենդանատեսակների կատարած տեղաշարժը, առանձնյակներին և նրանց մոտ նկատվող խնդիրներն ուսումնասիրելու նպատակով:

Ինն ամիսների ընթացքում ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում իրականացվել են խոշոր կաթնասունների մշտադիտարկման աշխատանքներ:

Ինն ամիսների ընթացքում «Բույսերի բազմազանության մշտադիտարկումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում» ծրագրի շրջանակում՝ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվել է աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման և արդիականացման գործընթացը, որին, ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Մկրտչյանի գլխավորությամբ, մասնակցել են գիտության, զբոսաշրջության և մոնիթորինգի մասնագետները: Ծրագրի բուն նպատակը մշտադիտարկման գործընթացի արդյունավետության բարձրացումն է, ՊՈԱԿ-ի մասնագետներին դաշտային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գործնական հմտությունների ու մշտադիտարկման մեթոդաբանության տեսական հիմքերի փոխանցման միջոցով: Ծրագրի փորձագետներ՝ Մ. Սարգսյանի և Ար. Էլբակյանի կողմից ներկայացվել են ծրագրի մանրամասները, ներառյալ՝ մշտադիտարկման մեթոդաբանությունը, ցուցիչ տեսակների նույնականացումն ու ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ներում տեղադրված փորձահրապարակները, յուրաքանչյուր պահպանվող տարածքի մշտադիտարկման համար ընտրված բուսատեսակները, դաշտային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմն, այդ թվում՝ կիրառվելիք Arcgis Survey 123 հավելվածը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Կովկասի բնության հիմնադրամի համագործակցության շրջանակում, վերջինիս ֆինանսավորմամբ և համակարգվում է ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի կողմից:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում իրականացվել են դաշտային աշխատանքներ, որոնց ընթացքում կազմակերպության գիտության, մոնիթորինգի և զբոսաշրջության մասնագետները, ուսումնասիրել են «Շիկահող» պետական արգելոցի, «Արևիք» ազգային պարկի և «Զանգեզուր» արգելավայրի տարածքներում տեղադրված փորձահրապարակները, կատարել համապատասխան գործողություններ:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական

կենտրոնի, Միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի մասնագետները իրականացրել են մշտադիտարկման և վնասակար միջատների նմուշառման աշխատանքներ: Ուսումնասիրությունները կատարվել են ներքոնշյալ ծրագրերի շրջանակում՝

- «Կովկասի բնության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող միջատների մոնիթորինգի ծրագիր»,
- «Հայաստանում ծոպաթևավորների ֆաունան և էկոլոգիական առանձնահատկությունները»,
- «ՀՀ ցիկադակերպերի ֆաունան և էկոլոգիան»,
- «Գյուղատնտեսական և անտառային վնասատու երկթևանի որոշ ընտանիքների ուսումնասիրությունը Հայաստանում»:

<<<<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ի «Արևիք» մասնաճյուղի աշխատակիցների հետ համատեղ՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Մոսկվայի բույսերի կարանտինի կենտրոնի մասնագետները, 3-օրյա այցի շրջանակում, իրականացրել են անտառապաթոլոգիական և միջատաբանական հետազոտություններ, կատարվել է նմուշառում՝ փշատերև ծառատեսակների շրջանում:

«Արևիք» ազգային պարկի տարածքում, ՊՈԱԿ-ի մասնագետի հետ համատեղ, «Բրդլինքս Հայաստան» ՀԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել են սողունների մոնիթորինգ:

«Կաթնասունաբանների հայկական ասոցացիա» ՀԿ-ի գիտնականների խումբը ս/թ հուլիսի 29-ից «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացնում են կրծողների մշտադիտարկման աշխատանքներ:

Ինն ամիսների ընթացքում ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF-Armenia) համագործակցության շրջանակում համատեղ իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ, ինչպես նաև ֆոտոբռնիչ սարքերի ստուգում և նորերի տեղադրում՝ ՊՈԱԿ-ի կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում:

2.2 Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝

ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիներով կազմակերպված գիտաճանաչողական արշավներ, զբոսաշրջային ծառայությունների մատուցում

Ինն ամիսների ընթացքում զբոսաշրջային սեզոնին ընդառաջ՝ ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում թարմացվել է ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող բնության հատուկ պահպանվող տարածքներ մուտք գործելու կանոնակարգը:

Հաշվի առնելով զբոսաշրջային կազմակերպությունների ակտիվ գործունեությունը ինստագրամյան տիրույթում և տեղեկատվության առավել հասանելի աղբյուր ապահովելու նպատակով՝ ՊՈԱԿ-ի համար ստեղծվել է ինստագրամի երկլեզու պաշտոնական էջ:

Փետրվարի երկրորդ կեսին ձյան առատ տեղումներով պայմանավորված՝ ՊՈԱԿ-ի կողմից առցանց տիրույթում զգուշացվել է ճնահյուսերի հավանականության վերաբերյալ, որում մասնավորապես հորդորվել է զերծ մնալ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքների լեռնային գոտիներում արշավներ կազմակերպելուց:

2.3 ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող էկոկրթական միջոցառումներ՝ հանրության իրազեկվածության և էկոլոգիական գիտակցության բարձրացման նպատակով.

Բնապահպանական իրազեկվածության բարձրացման նպատակով՝ ինն ամիսների ընթացքում «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները անց են կացրել 18 էկոկրթական դասընթաց, որոնց մասնակցել է 565 անձ:

Հունվարի 22-ին տեղի է ունեցել հանդիպում Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի ներկայացուցիչների հետ, որն ուղղված էր կենսաբազմազանության պահպանության միջոցառումների, էկոլոգիական աղետների, արդի բնապահպանական մարտահրավերների ներկայացմանը, ինչպես նաև մանրամասն խոսվել է բնության հատուկ պահպանվող տարածքների դերի ու տեսակների, կենսաբազմազանության, էկոհամակարգերի անխաթարության և մարդու ներգործության նվազեցման ու խելամիտ բնօգտագործման հիմունքների,

էկոզբոսաշրջության տարբերակող գործոնների մասին: Առանձնահատուկ ներկայացվել են ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող բնության հատուկ պահպանվող տարածքներն իրենց առանձնահատկություններով:

Հունվարի 29-ին բաժնի աշխատակիցները հանդիպել են Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի սաների հետ: Ներկայացվել է կենսաբազմազանության էությունը և պահպանության միջոցառումները, Հայաստանի կենսաբազմազանությունը, ՀՀ Կարմիր գրքում գրանցված էնդեմիկ, հազվագյուտ տեսակները:

Փետրվարի 14-ին Կապանի թիվ 5 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտների հետ իրականացվել է էկոկրթական հանդիպում, որի ընթացքում անց է կացվել ինտերակտիվ դասընթաց՝ «Մարդը բնության մի մասնիկն է» թեմայով, որի ընթացքում ներկայացվեցին բնության բաղադրիչները, մարդու դերը բնության մեջ՝ բացասական ու դրական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա և ՀՀ Կարմիր գիրքը, իսկ վերջում գիտելիքների ամրապնդման նպատակով անց է կացվել «Տխուր և ուրախ մոլորակ» խաղը:

Մարտի 13-ին ՊՈԱԿ-ի Գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն էկոկրթական հանդիպում են ունեցել Սյունիքի միջնակարգ դպրոցի աշակերտների հետ: Հանդիպման ընթացքում անցկացվեց ինտերակտիվ դասընթաց՝ «Մարդը բնության մի մասնիկն է» թեմայով, որի ընթացքում ներկայացվեցին բնության բաղադրիչները, մարդու դերը բնության մեջ՝ բացասական ու դրական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա և ՀՀ Կարմիր գիրքը:

Մարտի 18-ին՝ Թափոնների վերամշակման օրվա և սպասվելիք Առանց թափոնների միջազգային օրվա խորհուրդին համապատասխան, իրազեկվածության բարձրացման նպատակով, ՊՈԱԿ-ի Գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է էկոկրթական հանդիպում՝ Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի սաների հետ: Աշակերտներին ներկայացվել են թափոնների առաջացման պատճառներն ու տեսակները, թափոնների կուտակման վտանգավոր հետևանքները, աղբի կուտակման պատճառով Երկիր մոլորակի առջև ծառացած խնդիրները, այնուհետև խոսվել է դրանց կրճատման քաղաքականության մասին: Օրինակների միջոցով աշակերտները ծանոթացան թափոնների կառավարման

ծագարի կիրառման փուլերին՝ կրճատման, վերաօգտագործման, վերամշակման, տեսակավորման գործընթացներին, ինչպես նաև պլաստիկի վերամշակումից հագուստի, կենցաղային իրերի ստացման և մեր առօրյայում կիրառման հաջող փորձերին:

Մարտի 19-ին ՊՈԱԿ-ի գրասենյակում հյուրընկալվել են Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանի սաներին: Էկոկրթական ծրագրի շրջանակում աշակերտներին ներկայացվել են բնության բաղադրիչները, դրանց միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, ինչպե՞ս է ձևավորվում էկոհամակարգը, ի՞նչ նպատակով են ստեղծվում կարմիր գրքերը: Ստացված գիտելիքների ամրապնդման նպատակով աշխատակիցների կողմից անց է կացվել «Էկոհամակարգ՝ փոխադարձ կապեր» խաղը:

Ապրիլի 10-ին աշխատակիցները՝ Կապանի թիվ 2 ավագ դպրոցում, «Մասնագիտական կողմնորոշում» խմբակի ծրագրի շրջանակում ներկայացրել են ՊՈԱԿ-ի գործունեությունն ու հիմնական գործառույթներն իրականացնող մասնագիտությունները: Առաջնահերթ խոսվել է ՊՈԱԿ-ի կողմից կենսաբազմազանության պահպանությանն ուղղված ծավալվող գործունեությունը՝ ԲՀՊՏ կառավարում, մոնիթորինգ, էկոկրթություն, էկոզբոսաշրջություն և հոսքերի համակարգում և այլն: Հաջորդիվ աշխատակիցներն անդրադարձան կենսաբազմազանության մոնիթորինգի, հանրության հետ կապերի, էկոզբոսաշրջության մասնագետների պարտականություններին ու անհրաժեշտ հմտություններին՝ վերհանելով յուրաքանչյուր մասնագիտության առանձնահատկություններն ու ռիսկերը:

Ապրիլի 29-ին Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում անց է կացվել «Կենսաբազմազանության պահպանություն. բնության հատուկ պահպանվող տարածքներ» դասընթաց, որի նպատակը՝ կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումների ներկայացումն էր՝ բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծում, ՀՀ կարմիր գրքերի նպատակներ, կենսաբազմազանության առանձին ներկայացուցիչների պոպուլյացիայի վերականգնման գործընթացների իրականացում, ինչպես նաև էկոկրթությունն ու էկոզբոսաշրջությունն՝ ի նպաստ բնական միջավայրերի և էկոհամակարգերի վերականգնմանը:

Մայիսի 2-ին «Էկոհերոս՝ ինչպես լինել բնության ընկեր» խորագրով էկոկրթական հանդիպում՝ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցում: Դասընթացի մեկնարկին աշխատակիցների կողմից ներկայացվել են կենսաբազմազանությունը և դրա պահպանության ձևերը, բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակները, էկոլոգիական հավասարակշռության պահպանման կարևորությունը, ՊՈԱԿ-ի կազմում գտնվող հատուկ պահպանվող տարածքները: Աշակերտներին բնապահպանական գործընթացներին ներգրավվման նպատակով, ներկայացվել են մի շարք առանցքային թեմաներ՝

- Cop- 17. առաքելություն, նպատակներ և կարևորություն,
- Էկոհերոս՝ ինչպես լինել բնության ընկեր,
- Բնական ռեսուրսների օգտագործման կանոնակարգում. ինչպե՞ս օգտվել, առանց վնասելու:

Մայիսի 3-ին Կապանի թիվ 7 հիմնական դպրոցում ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է ծառատնկման կարևորության վերաբերյալ իրազեկման դասընթաց-քննարկում, որի ընթացքում ներկայացվել են ծառատունկի համար ընտրված տեսակների առավելություններն ու արժեքը՝ շրջակա միջավայրում:

Մայիսի 8-ին ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ՝ Ընձառյուծի միջազգային օրվա շրջանակում «Ընձառյուծ. Հայոց լեռների արքան» խորագրով էկոկրթական միջոցառում՝ ՀԿՀ «Խուստուփ» արգելավայրին հարակից Վաչագան բնակավայրում գտնվող Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոցում: Ներկայացվել են Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների Ընձառյուծները, Հայաստանում Ընձառյուծի պաշտամունքի արմատները, խոսվել է Ընձառյուծի տարածվածության և կենսամիջավայրի, վտանգման գործոնների, կերային բազայի, արտաքին հատկանիշների ու առանձնահատկությունների, պահպանության ու մոնիթորինգի միջոցառումների և դրա շրջանակում միջազգային համագործակցության, ինչպես նաև Ընձառյուծի և այլ կատվազգիների՝ Վագրակատվի և Յագուարի տարբերությունների մասին: Ստացված գիտելիքների ամրապնդման նպատակով, դպրոցի տարածքում կազմակերպվել են մի շարք խաղեր՝

- «Պնդումների փունջ՝ ճի՞շտ թե՞ սխալ»,
- «Ո՞ւմ մասին է. Վագրակատու, Ընձառյուծ թե՞ Յագուար»:

Որպես օրվա խորհրդանիշ՝ աշակերտների ձեռքերին նկարվեցին Ընձառյուծի հետքեր, ինչպես նաև տրվեցին նվերներ: Որպես ամփոփում՝ իրականացվեց լուսանկարում Arloopa հավելվածի միջոցով:

Մայիսի 17-ին կազմակերպվել էր «Կենսաբազմազանությունը՝ լուսանկարչի աչքերով» լուսանկարչական գիտարշավ՝ ՀԿՀ «Շիկահող» պետական արգելոցի Կենու պուրակում: Վայրի բնության լուսանկարչական դասընթաց- գիտարշավի ընթացքում, մասնակիցներին ընձեռնվել էր մասնագիտական հմտությունների զարգացման աննախադեպ հնարավորություն: Դասընթացավար, լուսանկարիչ Հայկ Բարսեղյանի կողմից արշավականները ստացան գիտելիքներ՝ լույսի հետ աշխատելու, կենսաբազմազանության յուրաքանչյուր բաղադրիչի առանձնահատկությունը լուսանկարների միջոցով փոխանցելու վերաբերյալ: Գիտարշավի ընթացքում «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից ներկայացվել են կենսաբազմազանության արժեքն ու մերօրյա մարտահրավերները, ռելիկտային տեսակների առանձնահատկությունները՝ «Շիկահող» պետական արգելոցի բուսական աշխարհը, ներառյալ ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակները՝ որոնք էլ հանդիսացան լուսանկարման հիմնական օբյեկտներ:

Մայիսի 31-ին ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից Մեղրու թիվ 1 դպրոցի աշակերտների համար կազմակերպվել է գիտաճանաչողական արշավ՝ «Շիկահող» պետական արգելոցում և «Սոսու պուրակ» արգելավայրում: Արշավի ընթացքում մոնիթորինգի մասնագետները ներկայացրել են արգելոցի ստեղծման նպատակները, կենդանական և բուսական աշխարհը, ինչպես նաև արահետի վերջնակետը հանդիսացող՝ Քսաջուր միջնադարյան եկեղեցու ավանդազրույցը: «Սոսու պուրակ» արգելավայրում «Շիկահող» մասնաճյուղի աշխատակիցները ներկայացրել են արգելավայրի արժեքը, Արևելյան սոսու՝ բնական ծագում ունեցող պուրակն ու տնկարանի գործունեությունը:

1. Օգոստոսի 7-ին «Շիկահող» պետական արգելոցում, սահմանամերձ Ծավ բնակավայրի պատանիների համար կազմակերպվել է գիտաճանաչողական արշավ, որի ընթացքում անց է կացվել էկոկրթական դասընթաց: ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը, Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում, «Հավերժ երիտասարդ, հավերժ կանաչ» խորագրով՝

կազմակերպել է գիտաճանաչողական արշավ՝ միտված երիտասարդների իրազեկվածության բարձրացմանն ու էկոլոգիահեն մտածողության ձևավորմանը: Հաշվի առնելով, որ Հայաստանում 2026 թվականին տեղի կունենա COP17-ը՝ ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովը, գիտաճանաչողական արշավի անցկացման վայր է ընտրվել կենսաբազմազանությամբ առանձնակի հարուստ՝ «Շիկահող» պետական արգելոցը: Մասնագետների կողմից ներկայացվել են կենսաբազմազմազանության դերն ու մարտահրավերները, արգելոցի կարմիրգրքյան տեսակներն ու առանձնահատկությունները, բնության հավասարակշռության պահպանման համար յուրաքանչյուր բաղադրիչի կարևորությունն, ինչպես նաև տեղի ավանդազրույցները: Արշավի ընթացքում մասնակիցները, ՊՈԱԿ-ի մասնագետների օգնությամբ, կատարեցին գործնական աշխատանք, ծանոթացան բույսերի մոնիթորինգի հմտություններին ու գործիքակազմին, այսպիսով ներգրավվելով շրջակա միջավայրի հավասարակշռության մշտադիտարկման աշխատանքներին:

2. Օգոստոսի 11-ին երիտասարդության միջազգային օրվան ընդառաջ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է հերթական միջոցառումը՝ միտված շրջակա միջավայրի հավասարակշռության պահպանման գործում երիտասարդների դերակատարման ներկայացմանը: Միջոցառումն անց է կացվել ՀԿՀ «Արևիք» ազգային պարկում՝ հարակից բնակավայրերի պատանիների ներգրավվմամբ: ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից միջոցառման մեկնարկը տրվել է երիտասարդների միջազգային օրվա նպատակների, կենսաբազմազանության կարևորության, մարդու բացասական ներգործության արդյունքում ծառացած խնդիրների և դրանց հնարավոր լուծումների ներկայացմամբ, ինչպես նաև առանձնահատուկ շեշտադրվել է 2026 թվականին Հայաստանում կայանալիք COP17՝ ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովը: Կազմակերպվել է «Էկոհամակարգ» խաղը, որն ամրապնդեց ստացված գիտելիքները: Մասնակիցների հետ իրականացվել է քայլարշավ «Արևիք» ազգային պարկի Լիճքի ջրվեժների արահետով: Միջոցառումն ամփոփվել է համատեղ շաբաթօրյակով:

3. Սեպտեմբերի 12-ին՝ «Մաքուր ակադեմիա» բնապահպանական ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակում իրականացված դասընթացն անց է կացվել առցանց ձևաչափով, այսպիսով հնարավորություն ընձեռնելով Հայաստանի տարբեր մարզերի և

մայրաքաղաքի էկոակտիվ երիտասարդներին համախմբելու մեկ գաղափարի շուրջ. «Գործել՝ հանուն շրջակա միջավայրի բարելավման՝ ի նպաստ մարդկության առողջ ապագայի»: Ներկայացվել են կենսաբազմազանության պահպանության մեթոդաբանությունն ու գործիքակազմը, բնության հատուկ պահպանվող տարածքների կարևորությունն ու առանձնահատկությունները, սպառնալիքներն ու մարտահրավերները, ինչպես նաև համալիր պահպանության միջոցառումները՝ հիմնվելով ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի առաքելության, գործունեության և արդյունավետ կառավարման վրա:

4. Սեպտեմբերի 29-ին և 30-ին Կապանի թիվ 7 հիմնական դպրոցում անց է կացվել «Մարդու և բնության հարաբերությունների էվոլյուցիան» թեմայով էկոկրթական դասընթաց, որի ընթացքում ներկայացվել են մարդու և բնության միջև հարաբերությունների զարգացման՝ շրջափուլերն իրենց առանձնահատկություններով, մարդու բացասական ներգործության արդյունքում առաջացած էկոլոգիական ճգնաժամն ու դրա հետևանքները, ինչպես նաև ժամանակակից՝ գիտակցման ժամանակաշրջանը՝ բնապահպանական շրջափուլը: Քննարկվել է հայ հասարակության շրջանում ձևավորված վերաբերմունքը բնության հանդեպ, իրականացվող պահպանության միջոցառումները՝ բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծում և այլ բնապահպանական գործունեություն, օրենքների ընդունումը, ինչպես նաև Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները:

Զբոսաշրջություն

Այցելուների իրազեկվածության բարձրացման նպատակով՝ ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող հատուկ պահպանվող տարածքներում՝ հիմնական զբոսաշրջային գրավչություններ տանող արահետների սկզբնամասերում տեղադրվել են տեղեկատվական և ուղղորդող ցուցանակներ:

Ինն ամսիների ընթացքում ՀԿՀ բնության՝ հատուկ պահպանվող տարածքների համար տրվել է 260 անցագիր՝ 1784 այցելուի համար: Զբոսաշրջային ծառայություններից օգտվել է 1612 անձ, որի դիմաց վճարված ընդհանուր գումարը կազմել է 3038500 ՀՀ դրամ:

Տեղի է ունեցել Սյունիքի ռեգիոնալ կոմիտեի հերթական առցանց հանդիպումը, որի ընթացքում ներկայացվել են Սյունիքի մարզում էկոզբոսաշրջային գոտիների ստեղծման համար անդամների կողմից առաջադրված ծրագրերը:

Հաջորդիվ անհրաժեշտ է ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված շարժական էկոկենտրոնի համար տրամադրել գնառաջարկ:

Համագործակցություն, հանդիպումներ, սեմինարներ

Ինն ամիսների ընթացքում ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF-Armenia) համագործակցության շրջանակում համատեղ իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ, ինչպես նաև ֆոտոբռնիչ սարքերի ստուգում և նորերի տեղադրում՝ ՊՈԱԿ-ի կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում: Աշխատանքների ընթացքում ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքում մի քանի անգամ արձանագրվել են մայր Ընձառյուծն իր ձագի հետ, նախկինում արձանագրված ընձառյուծներից, ինչպես նաև Կարմիրգրքյան այլ կենդանատեսակներ:

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի «RESILAND. Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ին նվիրաբերվել է 100 մեղվաընտանիք և խնամքն իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներ, ինչպես նաև, մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով, ՊՈԱԿ-ի աշխատակիցների համար իրականացվել է դասընթաց:

Տնօրենի 22.09.2025 թվականի 84 - Ա հրամանի համաձայն իրականացվել է <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի կողմից տրմադրված 100 մեղվաընտանիքների մեղրաքամ, որից քամել ենք 238 կգ մեղր:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը կազմակերպել էր լիցքաթափված մարտկոցների հավաքման արշավ, որն ուղեկցվել էր իրազեկման միջոցառումներով՝ Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող վտանգավոր թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումների շրջանակներում: Արշավի արդյունքում, մոտ 17 կգ թափոն հանձնվել է նախարարությանը՝ հետագա պահման և վերամշակման գործընթացը կազմակերպելու նպատակով:

Երիտասարդության միջազգային օրը ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը, մասնակցել է Կապան համայնքում անցկացվող ամենամյա «Երիտասարդական փառատոն-8848»-ին: Հաշվի առնելով, որ փառատոնը մարզային

երիտասարդության շրջանում իրազեկվածության բարձրացման լավագույն հարթակներից է, այս տարի ՊՈԱԿ-ի տաղավարը նվիրված էր 2026 թվականին Հայաստանում կայանալիք COP17՝ ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովին, ինչպես նաև ներկայացվել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գործունեությունը՝ բույսերի և կենդանիների մշտադիտարկում, էկոզբոսաշրջային հոսքի կառավարում և էկոկրթական ծրագրեր:

Հանրության առցանց իրազեկում

Ինն ամիսների ընթացքում ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջում տեղադրվել են տեղեկատվական նյութեր՝ ԲՀՊՏ-ներում արված կենդանատեսակների և բուսատեսակների լուսանկարներ ու տեսանյութեր, ՊՈԱԿ-ի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ հրապարակումներ, լուսաբանվել են ինն ամիսների ընթացքում հանրայնացման ենթակա աշխատանքները:

Շրջակա միջավայրի և բնապահպանի օրվա կապակցությամբ նկարահանվել է «Բնապահպանը՝ ես եմ» տեսաֆիլմը, որի նպատակն է շեշտադրել, որ մեզնից յուրաքանչյուրն՝ անկախ մասնագիտական կողմնորոշումից, կարող է լինել բնապահպան:

Զբոսաշրջային հոսքի կտրուկ աճով պայմանավորված՝ արվել են նախազգուշացնող և իրազեկող հրապարակումներ՝ հատուկ պահպանվող տարածքներում վարքագծի և անվտանգության վերաբերյալ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների օրվա կապակցությամբ «Շիկահող» պետական արգելոցում «Սյունիք» ՀԸ կողմից նկարահանվել է ռեպորտաժ:

Մաքրման աշխատանքներ

Համապետական շաբաթօրյակի շրջանակում «Սոսու պուրակ» արգելավայրում և տնկարանում և «Շիկահող» մասնաճյուղի վարչական շենքի հարակից տարածքում իրականացվել են մաքրման աշխատանքներ:

Տեխնիկական աշխատանքներ

Իրականացվել են առցանց տեսահսկման համակարգերի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ: Ինն ամիսների ընթացքում համակարգերի կողմից արձանագրվել են մի շարք կենդանատեսակներ, այդ թվում՝ Բեզարյան այծ, Գորշ արջ, Գայլ, Վայրի խոզ, Եվրոպական այծյամ, Եվրոպական լուսան և այլն:

<<Սոսու պուրակ>> պետական արգելավայր

Ինն ամիսների ընթացքում տնկարանից վաճառվել է 218 հատ Արևելյան սոսու 21 հատ Կատալպայի տնկի, որի դիմաց վճարված գումարը կազմել է 999000 ՀՀ դրամ:

Ինն ամիսների ընթացքում «Շիկահող» մասնաճյուղի աշխատակիցների կողմից «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանում պարբերաբար իրականացվել են մաքրման և խնամքի աշխատանքներ:

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրենի ժ/պ՝ Ա. Մկրտչյան